ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կյանքի վերջին շրջանում բազմավաստակ հայագետը զբաղվել է նաև Ուրարտուի պատմության ուսումնասիրությամբ։ Նրա այդ հետազոտության արդյունքները տեղ են գտել ֆրանսերեն լեզվով Փարիզում հետմահու հրատարակված «Հայաստանի պատմություն»[1] կապիտալ աշխատության մեջ։

Ն. Ադոնցը հիմնականում անդրադարձել է Ուրարտուի ռազմաքաղաքական պատմությանը, որի ֆոնի վրա հատուկ ուշադրություն է նվիրել այնպիսի աշխատատար ու բարդ թեմատիկայի, ինչպիսին տոպոնիմիկան է։

Զգալի հետաքրքրություն է ներկայացնում, օրինակ, քարե սալերի վրա Կալխուում հայտնաբերված Թիգլաթպալասար III-ի արձանագրության մի շարք բնակատեղիների՝ Նիկողայոս Ադոնցի կողմից առաջարկված համադրությունը ներկայիս համանուն բնակատեղիների հետ։ Այսպես, սեպագիր ղարաշրջանի Միլիսսան նա համադրում է Քլիսիի, Իզղեղան՝ Ազդինի հետ, որոնք եղել են Էնզիտե (պատմական Անձիտ) երկրում և հիմա գտնվում են Արևմտյան Հայաստանի Սիլվանի կազայում։ Նույնը պետք է ասել այս կազայում գտնվող Սարգարեի մասին, որը սեպագրերում հիշված է եղել Նալ լեռան մոտ, Ուլլուբա[2] երկրում, և որի անվան նախատիպը Ադոնցը համարում է Սարգաուրրին։ Իսկ հիշյալ արձանագրության Բիսիան, որը համարվել է ուրարտական ամրոց Նալ լեռան հետևում, Ն. Ադոնցը նույնացնում է այժմյան Սղերդի շրջանի Բիշեի հետ[3]։ Այդ համադրություններին լրիվին համապատասխանում են նաև Էնզիտե երկրի է. Ֆոռերի առաջարկած Դիուաքլի—Դիրիլի և Արքիսսա—Ցիս[4] նույնացումները, որոնք գտնվում են այժմյան Խանիքի մոտերքում։

Ինչպես երևում է բերված փաստերից, սեպագիր ղարաշրջանի Էնզիտե-Էնզատան տեղադրման տեսանկյունից մասամբ է համընկնում միջնադարյան հայկական Անձիտին։ Այլ կերպ ասած, Էնզիտե-Էնզատայի հարավարևելյան սահմանները, ի տարբերություն պատմական Անձիտի, Թիգլաթպալասար III-ի օրոք, այսինքն՝ մ. թ. ա. VIII դարի երկրորդ կեսին, ձգվել են ընդհուպ մինչև այժմյան Սիլվանի և Սղերդի շրջանները։

Իրավացի է պրոֆ. Ադոնցը նաև այն դեպքում, երբ չափազանց սուղ փաստերի հիման վրա ժամանակին ենթադրել է, որ Մենուա թագավորի օրոք Ալզինին ընդգրկել է Բիթլիսի նահանգը, որտեղից այդ անունը տարածվել է Բաթմանից արևելք ընկած ամբողջ տերիտորիայի վրա[5]։ Նրա այդ սրամիտ կանխատեսումը հետագայում հաստատվեց նորագույն փաստերով։ Պարզվում է, որ Մենուայի նորահայտ մի արձանագրության համաձայն, Ալզինիի արևելյան սահմանները իսկապես հասել են մինչև Վանա լճի հարավ-

---

[1] N i c o l a s A d o n t z. Histoire d'Arménie. Paris, 1947 (*այսուհետև՝* HA)։

[2] *Նալ լեռան տակ ենթադրվում է Հայկական Տավրոսի արևմտյան մասը, իսկ Ուլլուբան այսօրվա Խուլպն է (նորագույն քարտեզներում՝ Կուլպ կամ Պասուր)։*

[3] N. A d o n t z. HA, p. 93–94, et anm. 2.

[4] E. F o r r e r. Provinzeinteilung des assyrischen Reiches. Leipzig, 1920 (*այսուհետև՝* PAR), S. 85.

[5] N. A d o n t z. HA, p. 198.

արևմտյան անկյան մոտ ընկած Կուտումե բնակատեղին, Բիթլիսից մի փոքր հյուսիս-արևելք։

Զարմանալի իրողություն է, երբ մի դեպքում ուրարտական արձանագրության մեջ հիշատակված Կուտումեն հանդես է գալիս որպես Ալզինիի բնակատեղի, իսկ մյուս դեպքում՝ Թովմա Արծրունու պատմության մեջ համանուն Կոտումը (այժմյան Կոտումը) Աղձնիքի բնակատեղին է[6]։ Բերված փաստերին պետք է ավելացնել, որ մ. թ. ա. IX դարի ասորեստանյան թագավոր Սալմանասար III-ի արձանագրությունների համաձայն, ինչ-որ չափով համընկնում են նաև Ալզին և Էնզիտեն ընդհանրապես, եթե նկատի ունենանք, որ նրանցում միևնույն լեռնանցքը հանդես է գալիս մերթ Ալզի, մերթ էլ Էնզիտե անվամբ[7]։

Մյուս կողմից, Ն. Ադոնցի ուշադրությունը գրավել է ասորեստանյան սեպագրի Աշշուրիկիշա («Աշշուրը նվիրել է») քաղաքը, որը մ. թ. ա. VIII դարում կառուցել է Թիգլաթպալասար III-ը Ուլլուբա երկրում[8], այժմյան Խուլպ-Կուլպի շրջանում, Վանա լճից արևմուտք։ Նա իրավամբ Աշշուրիկիշան նույնացրել է «Աշխարհացույց»-ի Քիշի[9] հետ, որը պատմական Աղձնիքի քաղաքներից է, Քղիմարի հետ միասին[10], իսկ վերջինս ասորեստանյան և ուրարտական արձանագրությունների Կուլլիմմերի-Կուլմերին է, բյուզանդական Խլոմարոնը, Սիլվանից հարավ-արևելք[11]։ Մ. թ. ա. IX դարի ասորեստանյան թագավոր Սալմանասար III-ի արձանագրություններում Սուգունիան համարվում է ուրարտական թագավոր Արամեի քաղաքը, որը գտնվել է Խուբուշկիա երկրի (Բոխտանի հովտում, նրա աջափնյա հատվածում) և Նպիրի ծովի (Վանա լճի) միջև[12]։

Ելնելով այդ փաստերից, կարծում ենք միանգամայն իրավացի է Ն. Ադոնցը, երբ գրում է. «Սուգունիան անշուշտ Ուրարտուի սահմանների վրա եղած պահակակետերից մեկն է, հավանաբար, Մեծ Ադրակի մուտքի մոտ։ Երկու Աղբակները միմյանցից բաժանված են մի լեռնաշղթայով, որը բարձրանում է Ջուլամերկի վերևում։ Այդ լեռնաշղթան ունի մի անցում, որի երկու կողմերում՝ մուտքի և ելքի մոտերքում, գտնվում են երկու գյուղ՝ Սիկիանիս և Սուկան անուններով։ Այստեղ Սուգունիայի հիշատակը տեսնելը ոայթակղիչ է»[13]։ Ի դեպ պրոֆ. Ն. Ադոնցի դրածին ըստ ամենայնի ներդաշնակ են 10-վերստանոց քարտեզի վրա առկա Սակունիս և Սյուկյունիս բնակատեղիները՝ Ջուլամերկի և Բաշկալեի միջև, Ջուլամերկից Բոխտան տանող ճանապարհին, վերջինիս ակունքների մոտ[14]։

Փաստական նյութի սղության պատճառով Ուրարտուի տոպոնիմիկայում զգալի դժվարություն է հարուցել սեպագիր աղբյուրների Խարդա քաղաքի տեղատվությունը։ Ասորեստանյան թագավոր Սարգոն II-ի ժամանակվա հետախուզական նամակներից սոսկ հայտնի է, որ ուրարտացիները մ. թ. ա. VIII դարում պահակային ծառայություն են կրել Խարդայում։ Բնակատեղի առ բնակատեղի, ընդհուպ մինչև Տուրուշպա, հետախույզները դասավորված են

---

6 Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985 (այսուհետև՝ ТУ), с. 19, 125.

7 И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), § 27 (II, 63), § 28(35); տե՛ս Вестник древней истории, М., 1951, №№ 2, 3, 4.

8 P. Rost. Keilschrifttexte Tiglat-Pilesers III. Bd. I, Leipzig, 1893, S. 46—47, Z. 28—29, S. 52—53, Z. 43—44.

9. Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 114։

10 N. Adontz. HA, p. 198 et anm. 1.

11 Н. В. Арутюнян. ТУ, с. 117—118.

12 И. М. Дьяконов. АВИИУ, § 27 (I, 23)), § 29.

13 N. Adontz. HA, p. 75 et anm. 1.

14 Н. В. Арутюнян. ТУ, с. 171—172.

եղել ռազմական կարգով։ Այդ նույն նամակում, այնուհետև, հիշատակված է ինչ-որ խռովարի պալատականների վերադարձը Եփրատից, ինչպես նաև պահակային ծառայություն կրելը Շուրուբեում[15]։

Բերված փաստերից ինքնին երևում է, որ Տուրուշպան նույն Տուշպան է (պատմական Տոսպը)՝ Ուրարտուի մայրաքաղաքը։ Իսկ եթե Շուրուբեի տակ ենթադրենք Շուպրիա երկիրը լեռնային Սասունում, ապա վերոհիշյալ Խարդա քաղաքը ըստ երևույթին պետք է որոնել Տուշպայի, Եփրատի և Սասունի միջև։

Ելնելով ասվածից, կարծում ենք, բավական ճշմարտանման է թվում Ն. Ադոնցի մտահղացումը այն մասին, որ սեպագիր դարաշրջանի Խարդայի տակ պետք է ենթադրել Խարդ-բերդը (Խար-բերդ) և նույնացնել այն ներկայիս Խարբերդի կամ Խարպուտի հետ՝ Արածանիի ստորին հոսանքում, Էլյազիգից մի փոքր հյուսիս-արևելք[16]։

Այնուհետև բավական համոզիչ է Վերին Եփրատի հոսանքում, Մելիտեա (այժմյան Մալաթիա) երկրի մի շարք քաղաք-ամրոցների Ն. Ադոնցի կողմից առաջարկված համադրությունը անտիկ և հին հայկական աղբյուրների համապատասխան տվյալների հետ[17]։ Այսպես, Թումեիշկին նրա կարծիքով Եփրատի ձախ ափին գտնվող անտիկ Թոմիսան է, հին հայկական Թմնիսը (այժմյան Իզօղլուն), որը լավ հայտնի է Սոփքի թագավորության պատմությունից։ Գաուրախին անտիկ աղբյուրների Կլիմա Գարինեսն է, հին հայկական Գավրեքը, Չորրորդ Հայքի գավառներից մեկը Արածանիի գետաբերանի մոտ։ Իսկ Կարնիշին հիշեցնում է Պեւտինգերյան քարտեզի Կոռնեն[18], որը հռոմեական մի կայան էր Մալաթիայից հարավ-արևելք, Եփրատի աջ ափին, Կլաուդիայում[19]։

Անդրադառնալով Վանա լճից հարավ ընկած սեպագիր դարաշրջանի աշխարհագրական միավորներին, Ադոնցի ուշադրության առարկան է դարձել Տումուրրուն։ Ասորեստանյան թագավոր Սինախերիբի (մ. թ.ա. 705—681 թթ.) արձանագրությունների տվյալներով դա բնակատեղի է, որը, Կիբշուի հետ միասին, ընկած է եղել Նիպուր (այժմյան Ջուդի-դաղ) լեռան վրա[20]։ Ի դեպ, Կիբշուն մասնագիտական գրականության մեջ սովորաբար նույնացվում է այժմյան Գեֆշեի հետ, Ջախոյից 14 կմ հյուսիս-արևելք, Արևելյան Խաբուրի ավազանում[21]։

Տեղագրման և տեղանունների հնչյունական համապատասխանության տեսանկյունից, միանգամայն իրավացի է Ն. Ադոնցը, երբ ասորեստանյան սեպագրերի Տումուրրուն նույնացնում է հայ պատմագիրների Տմորիքի հետ[22], որը միջնադարում գրավելու է Արևելյան Խաբուրի ամբողջ ավազանը՝ Վերին, Միջին և Ներքին Կորդրիք գավառներով[23]։

Արդարացի է Ն. Ադոնցը նաև այն դեպքում, երբ ասորեստանյան սեպագրերի Գիլզան երկիրը[24], որն ընկած է եղել Ուրմիա լճի արևմտյան ափին, նույնացնում է Կուրճանի[25] հետ, որը Պարսկահայք նահանգի առաջին գավառն է՝ Նազլու-չայ գետի հովտում[26]։

---

15 И. М. Дьяконов. АВИИУ, § 50 (34, 35).

16 N. Adontz. HA, p. 120.

17 Մելիտեա երկրի քաղաք-ամրոցների մասին տե՛ս Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960 (այսուհետև՝ УКН). с. 306—307, № 158.

18 N. Adontz. HA, p. 199.

19 Կլաուդիայի տեղագրման մասին տե՛ս Ս. Տ. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 59։

20 И. М. Дьяконов. АВИИУ, §§ 57, 58.

21 E. Forrer. PAR, S. 37.

22 N. Adontz. HA, p. 122.

23 Ս. Տ. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 86։

24 Գիլզանի աղբյուրների և տեղագրման մասին տե՛ս Н. В. Арутюнян. ТУ, с. 64—65.

25 N. Adontz. HA, p. 106 et anm. 1.

26 Ս. Տ. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 35։

Մանայի թագավորության Ուրմիա լճից հարավ ընկած բնակատեղիների տեղադրման մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Ն. Ադոնցի առաջարկած Իգիրտու-Բերդիզոր և Սինիխինի-Սիմախ համադրությունները[27]։ Մանայի արքայանիստ քաղաք Իգիրտուն և բնակատեղի Սինիխինին հիշատակվում են ասորեստանյան թագավոր Սարգոն II-ի մ. թ. ա. 714 թ. դեպի Ուրարտու ձեռնարկած ավերիչ արշավանքի երթուղու սկզբնական հատվածում, Ուրմիա լճից հարավ[28]։ Հետևաբար, նրանց համադրությունները այժմյան Բերդիզորի և Սիմախի հետ, Բանից հյուսիս-արևելք, և՛ տեղադրության, և՛ տեղանունների հնչյունական համապատասխանության տեսանկյունից, միանգամայն հավանական են թվում։

Այնուհետև, Աշշուրնասիրապալ II-ի տարեգրությունից հայտնի է, որ դեպի հյուսիս ձեռնարկած արշավանքներից մեկի ժամանակ, Կալխուից (այժմյան Նիմրուդից) դուրս գալուց և Տիգրիսն անցնելուց հետո ասորեստանցիները հասել են Կեպանի և այդ երկրի հարկը գանձել նրա Խուզիրինա քաղաքում[29]։ Իսկ Թուկուլտի-Նինուրտա II-ի մոտ Խուզիրինան հիշատակվում է ոչ հեռու Նածիբինայից[30], որը մասնագիտական գրականության մեջ նույնացվում է անտիկ աղբյուրների Նիսիբիսի, հին հայկական Մծբինի և այժմյան Նուսայբինի հետ։ Մյուս կողմից, ուշագրավ է, որ քարտեզի վրա, Մարդինից հարավ-արևելք, նրա և Նուսայբինի միջև, ներկայիս Դարայի մոտ պահպանվել է նաև սեպագիր դարաշրջանի Խուզիրինայի անունը։ Ելնելով բերված փաստերից, կարծում ենք, միանգամայն իրավացի է Նիկողայոս Ադոնցը, երբ ասորեստանյան սեպագրերի Կեպանի երկրանվան մեջ տեսնում է հետագայի Հիսն-Քեյֆի (այժմյան Հասանքեյֆի) նախատիպը[31], Խուզիրինայից հյուսիս, Բոխտանի գետաբերանից մի փոքր արևմուտք, Արևմըտյան Տիգրիսի աջ ափին։

Ն. Ադոնցի՝ Ուրարտուի տոպոնիմիկային վերաբերող արժեքավոր եզրահանգումներից, վերջապես, ուշադրության արժանի է ուրարտական սեպագրերի Էրիկուախիի և հետագայի Որկովիի նույնացումը։

Հայտնի է, որ Էրիկուախի երկրի մասին պատմում են Արարատի հյուսիսային փեշին, Արաքսի աջափնյա հատվածում, Դաշբուրուն գյուղի մոտ գտնվող Ցոլակերտի ավերակներում հայտնաբերված երկու սեպագիր արձանագրություններ[32]։ Դրանց շնորհիվ էլ Էրիկուախի երկիրը մասնագիտական գրականության մեջ տեղադրվել է Արաքսի աջ ափին, Դաշբուրունի շրջանում և հարակից տարածքներում։

Ուստի բոլորովին պատահական չէ, որ բազմավաստակ հայագետը ուրարտական սեպագրերի Էրիկուախի (կարդա՛ Էրիկվա) երկրանվան մեջ իրավամբ տեսել է V դարի հայ պատմիչ Ղազար Փարպեցու մոտ հիշատակված Մասեաց ոտն գավառի Որկովի գյուղի անունը[33]։ Ի դեպ այդ Որկովին այժմ էլ շարունակում է գոյատևել ժամանակակից քարտեզներում Իգդիրից հարավ, Մեծ Արարատի հյուսիս-արևմտյան լանջին՝ Օրկոֆ անվան տակ։

* * *

Հայաստանի պատմական աշխարհագրության փայլուն գիտակ Նիկողայոս Ադոնցի ուրարտագիտական հետազոտություններում, իհարկե, պատ-

---

27 N. Adontz. HA, p. 100—101.

28 И. М. Дьяконов. АВИИУ, § 49 (6).

29 E. A. Wallis Budge, L. W. King. Annals of the Kings of Assyria. Vol. I, London, 1902, p. 375 (III, 93—94).

30 A. K. Grayson. Assyrian Royal Inscriptions. II, Wiesbaden, 1976, § 476.

31 N. Adontz. HA, p. 68.

32 Г. А. Меликишвили. УКН, 30, 31.

33 N. Adontz. HA, p. 201.

շաՀ տեղ է դրավում, առաջին հերթին, ուրարտա-հայկական տեղանունների ընդհանրությունների բացահայտումը։ Սակայն դրանցով ամենևին էլ չեն սահմանափակվում սեպագիր քաղաքակրթության ուսումնասիրությանը մատուցած նրա ակնառու ծառայություններ։

Պրոֆ. Ադոնցը դպրի ներդրում ունի նաև ուրարտական սեպագիր տեքստերի ճշգրիտ ընկալման, անձնանունների աներևակայելի սրամիտ մեկնաբանության, հինարևելյան ժամանակագրության խճճված ծալքերում վարպետորեն խորամուխ լինելու, ուրարտական պանթեոնում դիցուհիներ և ոչ ուրարտական, օտար աստվածներ, իսկ ուրարտակովկասյան լեզուների միջև սպասվող աղերսներ ակնկալելու և, վերջապես, ուրարտացիների ու հայերի միջև ծագումնաբանական տեսանկյունից հստակ տարբերակում տեսնելու բնագավառներում։

Այսպես, հայտնի է, որ մ. թ. ա. 714 թ. դեպի Ուրարտու ձեռնարկած արշավանքի ժամանակ Մուսասիրի տաճարում Սարդոն II-ի կողոպտած հրաշալիքների մեջ հիշատակվում է նաև մի բրոնզե արձան, որի վրա մակագրված է եղել «Սարդուրի, Իշպուինիի որդի»։ Լեհման-Հաուպտը ենթադրել է, թե Իշպուինին երեի Սարդուրի անունով որդի էլ է ունեցել (Մենուային բայի), որին նա կարդած պետք է լիներ Մուսասիրի կառավարիչ։ Նրա այդ անսակետը հետագայում ընդունել է տկադ. Բ. Բ. Պիոտրովսկին[34]։

Սակայն միանգամայն իրավացի է Ն. Ադոնցը, երբ գտնում է, որ տվյալ դեպքում «Սարդուրի, Իշպուինիի որդի»-ն պարզապես դրագրի անփութության արդասիք է՝ «Իշպուինի, Սարդուրիի որդու» փոխարեն[35]։ Ինքնին հասկանալի է, որ ուրարտական թագավոր Իշպուինին իսկապես եղել է Սարդուրի I-ի որդին, այն դեպքում, երբ «Սարդուրի» անվամբ ուրարտական չորս թագավորներից ոչ որ «Իշպուինի» անունով հայր չի ունեցել։

Նիկողայոս Ադոնցի դրչին է պատկանում նաև Ռուսա I-ի կառավարման ժամանակի ճշգրտումը։ Նրա ավարտը, ինչպես հայտնի է, սովորաբար սխալմամբ համարվել է մ. թ. ա. 714 թ.։ Ի դեպ, թյուրիմացություններ տեղի է ունեցել Ռուսա I-ի ժամանակակցի՝ ասորեստանյան թագավոր Սարդոն II-ի արձանագրություններում տեղ գտած հակասական փաստերի պատճառով։ Այսպես, Սարդոնի տարեգրության 8-րդ տարվա տվյալները և մի քանի այլ արձանագրություններ հայտնում են, թե մ. թ. ա. 714 թ. պարտությունից անմիջապես հետո Ռուսան, իբր, ինքնասպանություն է գործել[36]։ Սակայն պրոֆեսոր Ադոնցը իրավացիորեն նկատել է, որ ասորեստանյան նույն թագավորի տարեգրության հաջորդ, 9-րդ տարվա, այսինքն՝ մ. թ. ա. 713 թ. իրադարձություններում Ռուսան, Տաբալի հետ դաշնակցած, ռազմական գործողություններ է վարում Սարգոնի դեմ անդրեփրատյան տարածքներում[37]։ Ադոնցյան այդ ճշգրտումը ևս հետագայում ընդունվել է դիտության մեջ[38]։

Մյուս կողմից, անկախ որոշ մասնակի վարանումներից, մեզ պարզապես փայլուն է թվում Լուսիպրի և Ուեղիպրի մականունների ադոնցյան ստուգաբանությունը։ Այդ մասին նա գրում է. «Ռուսա I-ի Ուեղիպրի մականունը հիշեցնում է Սարդուրի I-ի Լուտիպրի հայրանունը։ Եվ քանի որ uedi և lutu ուրարտերեն բառերը նշանակում են «կին», իսկ ipri-ն ըստ երևույթին euri «տեր» բառի խուրրիերեն հին ձևն է, ուստի Լուտիպրին և Ուեղիպրին կնշանակեն՝ նա, որի տերը տիկինը՝ դիցուհին է, այլ կերպ

---

[34] Б. Б. Пиотровский. Ванское царство (Урарту). М., 1959, с. 110.

[35] N. Adontz. HA, p. 192. Ն. Ադոնցի այդ մեկնաբանությունը հետագայում ընդունել է նաև տողերիս հեղինակը, տե՛ս Биайнили (Урарту). Ереван, 1970, с. 309, прим. 558.

[36] АВПНУ, §§ 46 (129), 52, 53, 54 (72).

[37] N. Adontz. HA, p. 193.

[38] И. М. Дьяконов. ВДИ, 1956, № 2, с. 71 и прим. 2; Н. В. Арутюнян. Биайнили (Урарту), с. 310 и прим. 567.

ասած՝ դիցուհու հովանավորյալ»։ Դրանից ելնելով, Ն. Ադոնցը եզրահանգում է. «Եթե Ուեդիպրին Ռուսայի մականունն է, կամ երկրորդ անունը, ապա կարելի է ընդունել, որ Լուտիպրին էլ Արամեի մականունն է, հետևաբար, Սարդուրի I-ը Արամեի որդին է»[39]։

Ադոնցյան հատկապես այս վերջին եզրահանգումը, այսինքն՝ հնարավոր է, որ Լուտիպրին եղած լինի Արամեի մականունը, խիստ կարևոր նշանակություն ունի։ Բանն այն է, որ Սարդուրի I-ի հայրը՝ Լուտիպրին ո՛չ որևէ արձանագրություն է թողել (թերևս որդու նման աքքադերեն լեզվով), ո՛չ էլ հիշատակվում է ասորեստանյան սեպագրերում։ Այդ դեպքում ճշգրտում կարող է մտցվել ուրարտական թագավորների ժամանակագրության հաջորդականության մեջ, այսինքն՝ Արամեն հենց նույն Լուտիպրին է, ուստի նա Սարդուրի I-ի հայրն է։

Պրոֆ. Ադոնցը իրավացի է նաև այն դեպքում, երբ ժամանակին զարմանքով է նկատել ուրարտական պանթեոնում ոչ ուրարտական, օտար աստվածների բացակայությունը։ Զարմացել է, որ ուրարտական դիցարանը մնացել է այնպիսին, ինչպիսին եղել է Իշպուինիի և Մենուայի օրոք, չի հարստացել նորամուտ աստվածներով։ Նկատի ունենալով, որ Արգիշտի I-ը, Սարդուրի II-ը և Ռուսա I-ը հյուսիսում մեծ նվաճումներ են ձեռնարկել, Ն. Ադոնցը ակնկալել է նվաճված երկրների աստվածներ ևս տեսնել ուրարտական միջավայրում[40]։

Ն. Ադոնցի այդ կռահումը նորագյուտ արձանագրությունների փաստերով հաստատվել է։ Եթե նրա օրոք Ռուսա II-ի Զվարթնոցի արձանագրությունից հայտնի էր սոսկ օտար աստված Անիկուն, ապա հետագայում Էրեբունիի և Թեյշեբաինիի պեղումներից հայտնաբերվել են Արգիշտի I-ի և Ռուսա II-ի նոր արձանագրություններ, որոնցում հիշատակվում են ոչ միայն նվաճված Վազա երկրի Իուարշան, այլև, որքան զարմանալի թվա, բաբելացիների գերագույն աստված Մարդուկը։

Իուարշան, Անիկուի հետ միասին, հավանաբար եղել է Վազա երկրի տեղաբնիկների պաշտամունքի առարկան։ Նա հիշատակվում է մերթ տաճարի կառուցման առթիվ Էրեբունիում, մերթ էլ պաշտամունքային արարողությունների կապակցությամբ Թեյշեբաինիի նորակառույց տաճարում։ Պաշտամունքային օբյեկտի շինարարությունը Իուարշա տեղական աստծու պատվին կամ նրա հիշատակությունը ուրարտական գերագույն աստվածների եռյակի՝ Խալդիի, Թեյշեբայի, Շիվինիի, ինչպես նաև Խալդիի կնոջ՝ Վարուբանիի կողքին, ուրարտական իշխողների հեռատես քաղաքականության արգասիք էր՝ ձևականորեն «հարգել» տեղաբնիկների սուրբերեն իրավունքները, այդ թվում կրոնական հավատալիքները։ Դա, բռնության հետ միասին, ցույց էր տալիս ոչ միայն Վազա երկրին վերջնականապես տիրապետելու հանգամանքը, այլև նպատակ ուներ հուսալի թիկունք սանձելու դնով հուժկու արշավանքներ ձեռնարկել Սևանա լճի ավազանի երկրները հպատակեցնելու համար[41]։

Ինչ վերաբերում է Մարդուկին, ապա նա Կարմիր-բլուրում 1962 թ. հայտնաբերված ծավալուն արձանագրության անեծքի բանաձևում հիշատակվում է ուրարտական գերագույն աստվածների՝ Խալդիի, Թեյշեբայի և Շիվինիի կողքին, ըստ որում Մարդուկը այստեղ դրավում է ճիշտ այն տեղը, ուր սովորաբար հանդես է գալիս $\text{DINGIR}^{\text{MEŠ}}$ «աստվածներ» գաղափարագիրը, այսինքն՝ ոչ միայն ուրարտական դիցարանի մյուս աստվածները (բացի գերագույն եռյակից), այլև թշնամի երկրների աստվածները։ Մար-

---

[39] N. Adontz. HA. p. 191—192.

[40] Նշվ. աշխ., էջ 227։

[41] Н. В. Арутюнян. Новые урартские надписи. Ереван, 1966, с. 94.

դուկի հիշատակություններ կարմիր բլուրի արձանագրության մեջ, ըստ երևույթին, պետք է բացատրել Արարատյան դաշտավայրի Վաղա երկրում բաբելոնյան բնակչության առկայությամբ։

Այդ դեպքում, բնականաբար, հարց է ծագում, թե ինչպե՞ս կարող էր բաբելոնյան բնակչությունը մուտք գործել այդպիսի հեռավոր հյուսիսային երկիր։ Հայտնի է, որ մ. թ. ա. 781 թ. դեպի Բաբիլոնի և հարևան երկրներ ձեռնարկված արշավանքի ժամանակ Արգիշտի I-ը վերցրել է մեծ քանակությամբ ռազմագերիներ։ Նուրջ երեք տասնամյակ հետո այդ նույն երկրներից մոտ 40 հազար ռազմագերիներ է քշել Ուրարտու նաև Սարգուրի II-ը։ Հետևաբար, բաբելոնյան բնակչությունը կարող էր հանդես գալ Վաղա երկրում՝ սկսած մ. թ. ա. 781 թ. մինչև 731—730 թթ.[42]։

Երևի Ռուսա II-ը որոշակի վտանգ է զգացել բաբելոնյան վերաբնակիչների կողմից, այդ պատճառով անհրաժեշտ է գտել սպառնալ նրանց ոչ միայն ուրարտական առավածների ամենակարող դերագույն եռյակի, այլև հենց իրենց հարազատ Մարդուկի անունից։

Նիկողայոս Ադոնցին անհանգստացրել է նաև այն հանգամանքը, որ ուրարտական վավերագրերը չեն հիշատակում ոչ մի իգական աստվածություն։ Դա դարձրել է նրան մանավանդ այն պատճառով, որ Խալդի աստվածը Ռուսասիրում ամուսին ուներ՝ Բաղբարաու անվամբ։ Ն. Ադոնցին, բնականաբար, հետաքրքրել է այն հարցը, թե Խալդին արդյո՞ք Ուրարտուում ևս ամուսին ուներ և ինչպե՞ս էր կոչվում նա[43]։

Պրոֆ. Ադոնցի այդ հարցադրումը ևս, բարերախտաբար, անցած ավելի քան կեսդարյա ժամանակահատվածում անպատասխան չի մնացել։ Պարզվել է, որ Ուրարտուում Խալդիի կնոջն անվանել են Վարուբանի։ Հենց նրանից էլ սկսվում է Դիցուհիների շարքը, 15 անուններով, Մհերի դռան պաշտամունքային արձանագրության մեջ։ Վերջերս բացահայտվել է ուրարտերեն inuani «դիցուհի» (հմմտ. inaini «աստված») բառը, որով եղրափակվում է դիցուհիների հիշատակությունը ուրարտական պանթեոնում[44]։

Ն. Ադոնցի հանճարը փայլատակել է նաև այն դեպքում, երբ փաստական նյութի իսպառ բացակայության պայմաններում համոզմունք է ունեցել ի վերջո ոչնչացող աղերսներ տեսնելու ուրարտերենի և կովկասյան լեզուների միջև[45]։

Եվ, իսկապես, պրոֆ. Ադոնցի հիշյալ մտահղացումից շուրջ չորս տասնամյակ հետո մասնագիտական գրականության մեջ, ինչպես ասում են, երևաց առաջին ծիծեռնակը։ Պրոֆ. Ի. Մ. Դյակոնովը հրատարակեց «Խուրրի-ուրարտերեն և արևելակովկասյան լեզուներ» արժեքավոր հետազոտությունը, ուր բերվում էին թվով 52 բառապաշարային, ինչպես նաև մի շարք ձևաբանական ընդհանրություններ[46]։ Իսկ ուղիղ մեկ տասնամյակ հետո այդ նույն հեղինակը և Ս. Ա. Սաարոստին միասին հրատարակեցին շատ ավելի ծավալուն ու հիմնավոր հոդված, որում բացահայտված էին խուրրի-ուրարտերենի և արևելակովկասյան լեզուների թվով 168 բառապաշարային, ինչպես նաև հնչյունական ու ձևաբանական բազում ընդհանրություններ[47]։

Ըստ ամենայնի իրավացի է եղել Ն. Ադոնցը նաև այն դեպքում, երբ կասկածի տակ է առել գիտության մեջ արմատացած կարծիքը՝ մ. թ. ա.

---

42 Նույն տեղում, էջ 96—97։

43 N. Adontz. HA, p. 227.

44 Н. В. Арутюнян. К чтению и интерпретации урартской культовой надписи «Мхери дур».—Мировая культура. Традиции и современность, М., 1991, с. 127.

45 N. Adontz. HA, p. 269.

46 Древний Восток, 3, Ереван, 1978, с. 25—38.

47 Древний Восток. Этнокультурные связи, М., 1988, с. 164—207.

585 թ. Ուրարտուի կործանման ժամանակի վերաբերյալ։ Այդ մասին նա գրել է. «Մ. թ. ա. 521 թ. հայերն արդեն երկրի տերն էին և զենքի ուժով այն պաշտպանում էին Պարսից թագավոր Դարեհից։ Ուստի մ. թ. ա. 585 և 521 թթ. միջև ընկած ժամանակը բավական չէր այդպիսի արմատական հեղաշրջման համար։ Արժե Ուրարտուի կործանման թվականը ետ տանել մ. թ. ա. 616 թ. (երբ սկսվում է պայքարն Ասորեստանի դեմ) և 585 թ. միջև, որը Միդիայի և Լիդիայի միջև ծագած հնգամյա պատերազմի ավարտն էր»։

Պրոֆ. Ադոնցը նկատել է, որ հիշյալ ժամանակահատվածում Ուրարտուն չի երևում քաղաքական ասպարեզում առաջնակարգ դեր խաղացող այնպիսի խոշոր պետությունների շարքում, ինչպիսիք էին՝ Միգիան, Բաբելոնիան, Եգիպտոսը և Լիդիան։ «Եթե Ուրարտական երբեմնի հզոր պետությունը,—շարունակում է նա,—դեռևս կանգուն լիներ, ապա նա, անշուշտ, իր դիրքը կդրսևորեր հակառակորդ այն ճամբարների միջև, որոնք մրցում էին մահացող Ասորեստանին տիրելու համար»։ Ճակատագրական այդ պահին, Ն. Ադոնցի կարծիքով, Ուրարտուն արդեն պետք է կործանված լիներ[48]։

Եվ պատահական չէ, որ համարյա մեկ տասնամյակ հետո, այլ կարգի փաստերի հիման վրա, մոտավորապես նույն կարծիքին է հանգում նաև ականավոր արևելագետ Ի. Մ. Դյակոնովը։ Նա նկատել է, որ Ուրարտուի վերջին երկու տասնամյակների պատմության ուսումնասիրության համար յուրահատուկ նշանակություն ունեն «Բաբելոնյան ժամանակագրության» տվյալները։ Դրանք հաղորդում են Նարոպալասարի թագավորության 17-րդ տարում (մ. թ. ա. 609 թ.) Ուրարտուի դեմ ձեռնարկված մեդական (մարական) արշավանքի մասին։ Հենց այդ ժամանակվանից էլ, Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, Ուրարտուն պետք է ընկած լինի Մեդիայի ազդեցության ոլորտի մեջ։

Մյուս կողմից, Հերոդոտի պատմության համաձայն, մ. թ. ա. 585 թ. Մեդիայի և Լիդիայի սահմանը Փոքր Ասիայում անցնում էր Հալիս գետով։ Ուրեմն, այդ ժամանակ Ուրարտուն արդեն պետք է եղած լինի Մեդիայի կազմում։ Ինքնին հասկանալի է, որ Մեդիան հազիվ թե Փոքր Ասիայում պատերազմ սկսեր Լիդիայի դեմ՝ իր թիկունքում Ուրարտական պետության գոյատևման պայմաններում։ Հետևաբար, Ուրարտուի անկախության վերջին մնացուկների լիկվիդացումը, եզրակացնում է Ի. Մ. Դյակոնովը, պետք է վերագրել Մեդիայի և Լիդիայի միջև մղված պատերազմի ոչ թե ավարտին (մ. թ.ա. 585 թ.), այլ սկզբին (մ. թ. ա. 590 թ.)[49]։

Այսպիսով, հիշյալ փաստերը վկայում են, որ Ուրարտական պետության կործանման ժամանակի վերաբերյալ Ն. Ադոնցը միանգամայն ճիշտ եզրակացության է հանգել։

Վերջում գոհունակությամբ պետք է նշենք, որ Ն. Ադոնցը ծագումնաբանական տեսանկյունից իրավամբ հստակ տարբերակում է տեսել ուրարտացիների և հայերի միջև[50], մի հանգամանք, որ սկզբունքային նշանակու-

---

[48] N. Adontz. HA, p. 331.

[49] И. М. Дьяконов. Последние годы Урартского государства по ассиро-вавилонским источникам.—Вестник древней истории, М., 1951, № 2, с. 31—34.

[50] N. Adontz. HA, p. 376—377.

թյուն ունի Հինարևելյան Ուրարտու պետության, ինչպես նաև հայ ժողովրդի պատմության անթերի ուսումնասիրության համար։

Մ. թ. ա. VI դարի սկզբին քաղաքական արենայից հեռացած Ուրարտուի մասին Ն. Ադոնցը խորին ափսոսանքով ու երախտագիտությամբ գրել է. «Մարեց քաղաքակրթության մի օջախ, որը երեք դար շարունակ փայլել էր Հայաստանի բարձունքներում։ Նա առաջինը միավորեց երկիրը, բազմաթիվ ցիրուցան ցեղեր համախմբեց մի քաղաքական ու մշակութային կյանքի շրջանակներում։ Նա ուրիշ արժանիք էլ ունեցավ. նրա անընդհատ պայքարը Ասորեստանի դեմ խափանեց սեմական տարրի ներխուժումը Հայաստան լեռնաշխարհ և Փոքր Ասիա։ Պայքարել Ասորեստանի վայրագությունների ու մոլեգին կրքերի դեմ, փակել նրա ճանապարհը դեպի Նաիրյան երկրներ, դա մի ազնիվ առաքելություն էր,—եզրահանգում է Ադոնցը,—որ Ուրարտուն պատվով կատարեց, այդպիսով, նշանակալի ծառայություն մատուցելով քաղաքակրթությանն ու մարդկությանը»[51]։

Նիկողայոս Ադոնցի՝ ուրարտագիտությանը մատուցած խոշոր ներդրումը արծարծված փաստերով ամենևին չի սահմանափակվում։ Դա, անշուշտ, կարող է դառնալ հատուկ ուսումնասիրության առարկա։ Ի դեպ, առաջին հայացքից մասնակի թվացող այդ նորույթները անվանի հայագետի տասնյակ տարիների անխոնջ աշխատանքի արդյունք են։ Դրանք խնամքով հղկված այն սրբատաշ անկյունաքարերն են, որոնցով հմտորեն վեր է խոյացել ուրարտագիտության հոյակապ շենքը։

НИКОЛАЙ АДОНЦ И УРАРТОВЕДЕНИЕ

Доктор ист. наук Н. В. АРУТЮНЯН

Резюме

В последний период жизни выдающийся арменист и крупный востоковед Николай Адонц занимался также исследованием истории Урарту, результаты которого были изданы посмертно в Париже в капитальном труде Histoire d'Arménie. В упомянутой работе были затронуты в основном вопросы военно-политической истории, на фоне которых уделено особое внимание изучению топонимики. Представляет, например, значительный интерес отождествление Килиссы, Иззеды и Сардаурри клинописных источников с современными Клиси, Аздином и Сардаре в казе Сильван. То же следует сказать о поселении Биена клинописи, которое он считает прототипом совр. Бинин к юго-западу от оз. Ван, в районе Сгерда. Вполне убедительны также отождествления поселений Аиппурикиши клинописного периода с Кишом «Ашхарацуйца» западнее оз. Ван, в районе совр. Хульп-Кульп-Пасура, Сугунии с совр. Сикианисом и Суканом в районе Большого Агбака, Харды с совр. Харберд-Харпутом у нижнего течения Арацани. Перу проф. Н. Адонца принадлежит, с другой стороны, сопоставление ряда городов-крепостей страны Мелитеа (совр. Малатия у верхнего Евфрата) клинописных источников с соответствующими данными античных и древнеармянских источников—Туменшки с античн. Томисой и древнеарм. Тмнисом, Гаурахи с античн. Клима Гарниссом и древнеарм. Гавреком, Кариниши с Корне Певтингерской карты.

---

51 Նույն տեղում, էջ 286—287։

Вполне убедительны также отождествления Тумурру ассирийской клинописи с Тмориком в бассейне Восточного Хабура, Гилзана с Куричаном в долине Назлучая, у западных берегов оз. Урмия, Изирту с Бердизором и Сиихини с Сиахом южнее того же озера, к северо-востоку от Баиэ, Кепани с совр. Хасан-Кейфом несколько к западу от устьев реки Бохтан, на правом берегу Западного Тигра, Эрикуахи урартской клинописи с древнеарм. Воркони (совр. Оркоф) на северо-западном склоне Большого Арарата. Однако вопросами топонимики отнюдь не ограничиваются заслуги проф. Адонца в области изучения клинописной цивилизации. Значителен его вклад также в интерпретации текстов урартских надписей и собственных имен, уточнении вопросов хронологии, установлении строгого разграничения по происхождению между урартами и армянами. Так, перу проф. Адонца принадлежит уточнение ошибочности клинописного текста «Сардури, сын Ишпуини» на одной из бронзовых статуй Мусасирского храма вместо правильного «Ишпуини, сын Сардури». Затем, им же установлена точная дата конца правления Русы I—713 г. до н. э. (вместо ошибочного 714 г. до н. э.). Представляет определенный интерес также интерпретация собственных имен Лутипри и Уедипри. При накоплении и дальнейшем изучении фактического материала в настоящее время уже подтвердились также высказанные ранее гипотезы проф. Адонца об уточнении времени гибели Урартского государства, возможность наличия урартских богинь и неурартских—иноземных божеств в урартском пантеоне, общностей между хурито-урартскими и кавказскими языками.